ՏԵՂԵԿԱՆՔ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Միջոցառումների անվանումները**	**Միջոցառումների կատարման արդյունքները**
ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	98.	«Ոռոգման նպատակով 2014 թվականին Սևանա լճից ջրառի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը:	ՀՀ կառավարության 23.04.2014թ. N432-Ա որոշմամբ ընդունվել է <<Ոռոգման նպատակով 2014 թվականին Սևանա լճից ջրառի մասին>> ՀՀ կառավարության որոշումը: Համաձայն <<Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին>> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի՝ 2014 թվականի համար առավելագույն չափաքանակ է սահմանվել 270 մլն.խոր.մետրը: Վերը նշված օրենքի 1-ին հոդվածով հաստատված Ժամանակավոր ծրագրի 5-րդ կետի 1-ին պարբերությամբ նախատեսված է, որ Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակից (170.0 մլն.խոր.մետր) ավել բացթողումը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով՝ ջրային համակարգերի կառավարման լիազորված պետական մարմնի ներկայացրած մեկամսյա կանխատեսումային առաջարկությունների հիման վրա: ՀՀ կառավարության 17.07.2014թ. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի N 432-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N696-Ա որոշմամբ Սևանա լճից ջրառի չափաքանակն ավելացվել է մինչև 245.0 մլն. խոր. մետր: 2014թ. օգոստոսի 14-ին ընդունվել է ՀՀ կառավարության <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի N 432-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N857-Ա որոշումը, որով Սևանա լճից ջրառը սահմանվել է 270 մլն.խոր.մետր:

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	78.	Խմելու ջրի կայուն և հուսալի ջրամատակարարում, որակի ապահովում, ջրի կորուստների կրճատում, ջրամատակարարման տևողության աստիճանական ավելացում՝ նախորդ տարվա նկատմամբ առնվազն 1 ժամով, Սևանա լճի բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի վերանորոգում ու կառուցում, ջրային տնտեսության ոլորտի հետագա զարգացման ռազմավարական ծրագրերի մշակում, ինչպես նաև ջրամատակարար կազմակերպությունների կողմից չսպասարկվող բնակավայրերում ուսումնասիրությունների ավարտում և ներդրումային ծրագրերի նախապատրաստում:	-2014 թվականին համակարգի կազմակերպությունների կողմից ապահովվել է մատակարարվող խմելու ջրի որակը, կայուն և հուսալի ջրամատակարարումը, ավելացել է ջրամատակարարման միջին տևողությունը: -<<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման օրական միջին տևողությունը կազմել է 17.55 ժամ: Կորուստները նախորդ տարվա 78.26%-ի համեմատ նվազել և կազմել են 76.6%: -Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Համայնքային ջրամատակարարման ծրագրի» շրջանակներում իրականացվել են ջրամատակարարման համակարգերի բարելավման աշխատանքներ, այդ թվում՝ «Մասիս քաղաքի և հարակից չորս գյուղերի ջրամատակարարման համակարգերի վերակառուցում» ենթածրագրի շրջանակներում իրականացվել են ընդհանուր երկարությամբ 78.8 կմ ջրատարերի, բաշխիչ ցանցերի, մուտքագծերի կառուցման աշխատանքներ, ինչպես նաև 2819 հատ անհատական տների ջրաչափական հորերի տեղադրման աշխատանքներ: «Էջմիածին քաղաքի և հարակից 4 գյուղերի ջրագծերի վերակառուցում» ենթածրագրի շրջանակներում իրականացվել են ընդհանուր երկարությամբ շուրջ 51.8 կմ ջրագծերի և մուտքագծերի կառուցման աշխատանքներ, ինչպես նաև 2357 անհատական տների ջրաչափական հորերի տեղադրման աշխատանքներ: «Աշտարակ քաղաքի և հարակից 4 գյուղերի ջրագծերի վերակառուցում» ենթածրագրի շրջանակներում իրականացվել են ընդհանուր երկարությամբ շուրջ 61.9 կմ ջրատարների, բաշխիչ ցանցերի կառուցման աշխատանքներ, ինչպես նաև տեղադրվել են 1540 հատ ջրաչափական հորեր: -Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող <<Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի>> շրջանակներում նախատեսվել է Հայաստանի թվով 17 համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման

			աշխատանքներ, այդ թվում՝ Ջերմուկ և Դիլիջան քաղաքներում կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են ընդհանուր երկարությամբ 332.15 կմ ջրատարների, ջրագծերի, բաշխիչ ցանցերի, կոյուղու կոլեկտորների, կոյուղացանցերի, կառուցման աշխատանքներ: Ջերմուկ և Դիլիջան քաղաքներում կառուցվել են կեղտաջրերի մաքրման կայաններ: -Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվել են ընդհանուր երկարությամբ 724.7 կմ ջրագծերի, մուտքագծերի կառուցման աշխատանքներ, տեղադրվել են թվով 18887 հատ ջրաչափական հորեր: -KfW բանկի ֆինանսավորմամբ <<Համայնքային ենթակառուցվածքներ II>> ներդրումային ծրագրի 2-րդ փուլով իրականացվող <ՀՀ Լոռու (Վանաձոր) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնում> ծրագրով կառուցվել են ընդհանուր երկարությամբ շուրջ 86 կմ ջրագծեր և ընդհանուր երկարությամբ շուրջ 3 կմ կոյուղու ցանց: Ծրագրի շրջանակներում ավարտված աշխատանքների արդյունքում նոր վերականգնված գոտիներում ապահովվել է շուրջօրյա ջրամատակարարում, իսկ հին գոտիներում ջրամատակարարման օրական միջին տևողությունը կազմել է 19.6 ժամ: <<Լոռի-ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի սպասարկման տարածքում կորուստները կազմել է 83.3%: -<<Շիրակի (Գյումրի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնում>> ծրագրի շրջանակներում կառուցվել են ընդհանուր երկարությամբ շուրջ 138.3 կմ բաշխիչ ցանցեր, տեղադրվել են 3700 տնային դիտահորեր: <<Շիրակ-ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ծրագրի շրջանակներում ավարտված աշխատանքների արդյունքում նոր վերականգնված գոտիներում ապահովվել է շուրջօրյա ջրամատակարարում, իսկ հին գոտիներում ջրամատակարարման օրական միջին տևողությունը կազմել է 18.6 ժամ: <<Շիրակ-ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի սպասարկման տարածքում կորուստները կազմել է 87.2%:

			-<<Նոր Ակունք>> ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող բնակավայրերի ջրամատակարարման միջին տևողությունը կազմում է 23.57 ժամ: -<<Նոր Ակունք>> ՓԲԸ-ի սպասարկման տարածքում կորուստները կազմել է 68.65%: -Աբու Դաբիի զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող <<Արփա-Սևան>> թունելի հիմնանորոգման վարկային ծրագրով իրականացվել են վտանգավոր հատվածներում նոր ժամանակավոր ամրակապերի տեղադրման, երեսարկի, ինչպես նաև հատակի կառուցման աշխատանքներ: 2014 թվականի ընթացքում իրականացվել են աշխատանքներ, այդ թվում՝ վտանգավոր հատվածների նոր ժամանակավոր ամրակապերի տեղադրում՝ 186.62 տն, երեսարկի կառուցում 302.51 գծ.մ, ցեմենտային լցամղում և ստուգիչ լցամղում՝ 3871.76 գծ.մ: -<<Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և ընթացիկ նորոգում, կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման ծրագրերով իրականացվում են ամենամյա աշխատանքներ: 2014 թվականին իրականացվել են 156.3 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում, ինչպես նաև 22.24 կմ ընդհանուր երկարությամբ դրենաժային ցանցերի շահագործման աշխատանքներ:
ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	79.	Ոռոգման համակարգերի վերականգնման ծրագրով շուրջ 50 կմ ոռոգման ջրանցքների վերականգնում:	-Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող <<Ոռոգման համակարգերի վերականգնման ծրագրով>> նախատեսված աշխատանքների կատարման նպատակով խորհրդատվական ծառայությունների նախագծային աշխատանքները հաշվետու ժամանակահատվածում սկսվել են, որոնք նախատեսվում է ավարտել 2015 թվականի հունվար ամսին: ՀՀ կառավարության 27.02.2014թ. N218-Ն որոշմամբ հաստատված <<Ոռոգման համակարգերի հիմնանորոգում>> ծրագրով վերականգնվել և վերանորոգվել են ընդհանուր երկարությամբ շուրջ 20 կմ ջրանցքներ և խողովակաշարեր: Միաժամանակ գարնանային նախապատրաստական աշխատանքների շրջանակներում ոռոգման համակարգերում ջրօգտագործողների ընկերությունների կողմից իրականացվել են համապատասխան վերականգնման, վերակառուցման և մաքրման աշխատանքներ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	80.	Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի նախապատրաստում:	Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի մասով հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են. -Կապսի ջրամբարի մասով՝ <<Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում/Ախուրյան գետ Կապսի ջրամբարի և ինքնահոս համակարգի կառուցում>> խորհրդատվական ծառայությունների համար CES Consulting Engineers Salzgitter GmbH, Braunschweing (Գերմանիա) և Երևանի պետական ճարտարապետության և շինարարության համալսարան (Հայաստան) գործընկերներ կազմակերպության հետ 2013 թվականի հոկտեմբերի 17-ին ստորագրվել է պայմանագիր, որի կիրարկման ժամկետը 2013 թվականի նոյեմբերի 10-ն է: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները սկսված են և գտնվում են ավարտական փուլում: Հաջորդ փուլով նախատեսվում է իրականացնել պատվարի և ինքնահոս համակարգի կառուցման համար մանրամասն նախագծման և մրցութային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները, որի համար անցկացվելու է նոր մրցույթ: ՏՏՀ ուսումնասիրության արդյունքների համաձայն նախատեսվում է սկսել ջրամբարի կառուցման 1-ին փուլը, որով ջրամբարի ընդհանուր ծավալը կկազմի 25 մլն մ^3, իսկ պատվարի բարձրությունը՝ 55մ: -Եղվարդի անավարտ ջրամբարի վերակառուցման նպատակով 2014 թվականի հունիսի 19-ից սկսվել են իրագործելիության նախնական ուսումնասիրությունները (Pre-feasibility Study) գտնվում են ավարտական փուլում: Դրանց կհաջորդեն իրագործելիության ուսումնասիրությունները (Feasibility Study), որոնք նախատեսված է կատարել 2015 թվականի փետրվար ամսից մինչև 2015 թվականի սեպտեմբեր ամիսը: -Մաստարայի ջրամբարի կառուցման նպատակով ներկայումս բանակցություններ են ընթանում Արաբական տնտեսական զարգացման Քուվեյթյան հիմնադրամի հետ: -Վեդու ջրամբարի կառուցման համար <<Վեդի ջրամբարի և նրա ոռոգման տարածքների տեխնիկատնտեսական ուսումնասիրություն և Վեդիի ջրամբարի շինարարության մանրամասն նախագծի պատրաստում>> խորհրդատվական ծառայությունների իրականացման համար <<ARTELIA

			EAU&ENVIRONMENT>> ՀՁ (Ֆրանսիա), <<SHER Ingenieurs-Conseils>> (Բելգիա) համատեղ <<JRTUC>> LTD (որպես ենթախորհրդատու, Հայաստան) 2013 թվականի նոյեմբերի 25-ին ստորագրվել է պայմանագիր: Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի շինարարության համար տեխնիկա-տնտեսական հիմնավորման ուսումնասիրությունն ավարտվել է և հաջորդ փուլով շարունակվելու է իրականացվել ջրամբարի և ոռոգման համակարգի շինարարության համար մանրամասն նախագծման և մրցութային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները: Վեդու ջրամբարի տեխնիկա-տնտեսական հիմնավորման ուսումնասիրության աշխատանքները Զարգացման Ֆրանսիական Գործակալության (AFD) ֆինանսավորմամբ ավարտվել են և այժմ նախատեսվում է սկսել 29 մլն մ^3 ծավալով ջրամբարի կառուցման համար նախագծային աշխատանքները: Ընդ որում՝ ՀՀ կառավարության 16.10.2014թ. N1173-Ն որոշմամբ Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագրով 2014 թվականի համար նախատեսվող մանրամասն նախագծի և մրցույթային փաստաթղթերի պատրաստման աշխատանքների իրականացման համար ռետրոակտիվ ֆինանսավորման նպատակով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 116.5 մլն դրամ:
ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	81.	Ջրային տնտեսության ոլորտի հետագա զարգացման ռազմավարական ծրագրերի մշակում, ջրամատակարարման ոլորտում կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմամբ ունիվերսալ սակագնային քաղաքականության ներդրման աշխատանքների նախապատրաստում, ջրամատակարար կազմակերպությունների կողմից չսպասարկվող բնակավայրերում ուսումնասիրությունների ավարտում և ներդրումային ծրագրերի նախապատրաստում, ինչպես նաև ՀՀ ջրային օրենսգրքով նախա-տեսված կառավարման համակցված և խորացված ձևերի կիրառում:	-KfW բանկի ֆինանսավորմամբ <<ՀՀ-ում գործող ջրամատակարարման ընկերությունների սպասարկման տարածքից դուրս գտնվող համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավմանն ուղղված կիրառելիության ուսումնասիրություններ>> ծրագրի շրջանակներում իրականացվել են ուսումնասիրություններ՝ ջրամատակարար կազմակերպությունների սպասարկման տարածքից դուրս գտնվող բնակավայրերում ջրամատակարարման բարելավմանն ուղղությամբ: -Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող <<DH Infrastructure Economics & Finance>> խորհրդատվական կազմակերպության կողմից <<Հայաստանի ջրային սեկտորի սակագնի ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում իրականացվել են համապատասխան աշխատանքներ:

			-Ջրային ոլորտի բարեփոխման ռազմավարությունը ներկայացնելու համար Հայաստանի ջրային սեկտորի ուսումնասիրության ծրագրի շրջանակներում իրականացվել են համապատասխան աշխատանքներ: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից իրականացվող <<Կեղտաջրերի կառավարման ռազմավարություն>> խորհրդատվական ծրագրով մշակել է ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ռազմավարություն: Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում պետական-մասնավոր գործընկերության զարգացման նպատակով ընդունվել են ՀՀ կառավարության 14.08.2014թ. <<Պետական-մասնավոր գործընկերության հետագա զարգացմանն ուղղված Հայաստանի խմելու ջրի ոլորտի բարեփոխումների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին>> N883-Ն և <<Երևան Ջուր>>, <<Հայջրմուղկոյուղի>>, <<Լոռի-ջրմուղկոյուղի>>, <<Շիրակ-ջրմուղկոյուղի>> և <<Նոր Ակունք>> ՓԲԸ-ների կողմից սպասարկվող տարածքներում պետական-մասնավոր գործընկերության ձևը և ժամկետը սահմանելու մասին>> N888-Ն որոշումները:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության
ջրային տնտեսության պետական կոմիտե